



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

«29» հոկտեմբեր 2020 թ.

№ 2/4541-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՌՈՒԲԵՆ ՇԵԽՈՅԱՆԻ, ԱՆԴՐԱՆԻԿ ԶԱՆՈՅԱՆԻ, ԱՐՍԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻ,  
ԱՇՈՏ ԹԱՄԱՋՅԱՆԻ, ՆՈՐԱՅՐ ԱՅՎԱԶՅԱՆԻ, ԱՐԹՈՒՐ ՂԱԶԱՐՅԱՆԻ, ՍՏՅՈՊԱ  
ՄԻՆԱՍՅԱՆԻ ԵՎ ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ  
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 89/2020 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչության ոլորտային թիվ 8 բաժնի գլխավոր օպերիազորներ Ռուբեն Սեդրակի Շեխոյանի, Անդրանիկ Կարենի Զանոյանի, նույն վարչության ոլորտային թիվ 2 բաժնի գլխավոր օպերիազորներ Աշոտ Աղասու Թամազյանի, Արսեն Սումբատի Քոչարյանի, ավագ օպերիազոր Նորայր Հովհիկի Այվազյանի, թիվ 18 (Արմավիրի) բաժնի գլխավոր օպերիազորներ Արթուր Մյասնիկի Ղազարյանի, Ստյոպա Դավթի Մինասյանի և Հակոբ Կամոյի Վարդանյանի նկատմամբ կիրառել «նախազգուշացում» կարգապահական տույժը:



2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կ.Գրիգորյանին՝ սույն հրամանն իրազեկել ողջ անձնակազմին:

Recoverable Signature



X *Edvard Hovhannisyán*

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ